ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ
ՄԱՐԶՊԵՏ

<<..10..>> փետրվարի 2012թ. N..6....
Ք. Եղեգնաձոր

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍԽԵՄԱՆԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՄԱՆ ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 25-Ի ԹԻՎ 21 ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի <<բ>> ենթակետի, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1918 –Ն որոշմամբ հաստատված հավելվածի 4-րդ կետի պահանջներով,

Կարգադրում եմ

1. Ստեղծել ՀՀ Վայոց ձորի մարզի վարչական սահմաններում գտնվող հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման մարզային հանձնաժողով համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2009 թվականի փետրվարի 25-ի <<Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի վարչական սահմաններում գտնվող հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման մարզանին հանձնաժողով ստեղծելու մասին>> թիվ 21 կարգադրությունը:

ՎԱՀԱԳՆ ԱՍՏՅԱՆ

Հավելված
ՀՀ Վայոց Ձորի մարզպետի
2012թ.փետրվարի 10-ի
թիվ 6 կարգադրության

ՀՀ Վայոց ձորի մարզի վարչական սահմաններում գտնվող հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման մարզային հանձնաժողովի կազմը.

Ս. Բագրատյան *- մարզպետ՝ հանձնաժողովի նախագահ*

Անդամներ՝

Բ. Մկրտչյան՝ *մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ,*

Մ. Մեսրոպյան՝ *մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի, մարզային հողային պետական տեսչության պետ /հանձնաժողովի քարտուղար/,*

Ա. Եսայան՝ *<<Վայոց ձորի գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոն>> ՓԲԸ-ի տնօրեն,*

Ա. Մինասյան՝ *ԱԳԿՊԿ-ի աշխատակազմի Վայոց ձորի մարզային ստորաբաժանման ղեկավարի տեղակալ,*

Վ. Գրիգորյան՝ *ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչության Վայոց ձորի տարածքային բաժնի պետ,*

Հ. Կարապետյան՝ *ՀՀ Քաղաքաշինության նախարարության քաղաքաշինական պետական տեսչության Վայոց ձորի տարածքային բաժնի պետ,*

Գ. Գաբրիելյան՝ *Էներգետիկայի պետական տեսչության Հարավային միջմարզային բաժնի գլխավոր մասնագետ,*

Գ. Բաբաջանյան՝ *Մշակույթի նախարարության աշխատակազմի պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության գործակալության Վայոց ձորի և Սյունիքի տարածքային բաժնի գլխավոր մասնագետ,*

Մ. Դովլաթյան՝ *ՊՄՊ Վայոց ձորի մարզային ծառայության պետ,*

Վ. Հայրապետյան՝ *մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի մասնագետ:*

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ ***Կ. ՍԱՀԱԿՅԱՆ***